**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ**

N__________ "28" 10 2014 թ.

# ՀՐԱՄԱՆ N 667-Ա

## ԱԼՎԱՐԴ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ալվարդ Սերոբյանին նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ:
2. «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործառույթները վերապահել Ալվարդ Սերոբյանին:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ս. Մուրադյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

0010, Երևան, Հանրապետության 0010, Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 93 49, ֆաքս /факс/fax (374 10) 52 39 22,
0010, Ереâан, Площадь Республики, Дом правительства 3, Government House 3, Republic Square, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am